

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

### ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ\*

Երգնկացին օգտուել է Խոսրովիկ Թարգմանից. «Խոսրովիկ Թարգմանիչ և երկասիրութիւնը նորինա մեր աշխատութեան մէջ, հաւանական էինք համարիլ, թէ Անանիա Սահանսեցու, Խոսրովիկ Թարգմանչի և Յովհաննէս քահանայի կամ Սարկաւագ վարդապետի հակաճառութիւնները այլ և այլ տեղերում գտնող և մի տփի մէջ ամփոփող Յոհաննէս եղնկայեցին նոյն է ԺԴ—ԺԴ գարերում որբծող, յայտնի վարդապետ և մատենապիր նոյնանուն անձի հետ\*\*. Երգնկացու քերականութեան և Խոսրովիկ Թարգմանչի զբական առնչութիւնն այլ ևս կառկածի տեղիք չէ Խողնում այդ իրադութեան նկատմամբ Խոսրովիկ Ե. գլխի մէջ, եր. 177. «Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք... զի յիմանալոյ միանդամայն և ի զգալոյ է բաղկացեալ հոգեռվլ բանականաւ ընդ իմանալիոն և մարմնով ընդ զգալիս» հատուածը Երգնկացին բառացի առել է իւր Քերականութեան մէջ. Զեռ. Ա. Էջմ. № 2359, 29ր+236ա.

\* \*

Յովինանեւս Երգնկացու բաղաւածքը Անանիայի ԱԾեղիկմ Թոնիրառնեցած գրաւածից. Յայտնի է, որ կորած է Անանիա Նարեկացու ընդդէմ Թոնդրակեցիների զբած աշխատութիւնը: Միարանի հրատարակած «Գիր Խոստովանութեանը»-ը\*\*\*, երբէք նոյն լինել չէ կարող Անանիայի այն գրքի հետ, որ կարդացել են Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոս և Ներսէս Շնորհալին ու յանձնարարել իրենց ընթերցողներին որպէս լաւագոյն հերքում Թոնդրակեցիների գէմի†:

\* Այս վերնադրի տակ «Արարատ»ի մէջ կիրատարակենք մի շարք բանափրական մանր զիտողութիւններ եւ բնադիրներ, իւրաքանչիւր հատուածը անկախ միւսից:

\*\* 1903, Վաղարշապատ. եր. 24—26.

\*\*\* Արարատ. 1792. եր. 6—48:

† Ուսումնափրութիւն Մանիքա-Պաւղկեան Թոնդրակեցիներու աղանդին եւ Գրիգոր Նարեկացւոյ Խուռամը. Հ. Բարսեղ Սարգիսիան. Վենետիկ. 1895 եր. 108—117: Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. Կ. Կոստանսեանց. Աղեքոանդրապոլ. 1910. եր. 455, 469: Թուղթ Ընդհանրական. 1865. Ս. Եջմիածին. եր. 575:

իւր ժամանակին Միաբանի կարծիքի անընդունելիութիւնը ցոյց են տուել ։ Բարսեղ Սարգսեան և Կարապետ սարկաւագ (այժմ եպիսկոպոս) Տ. Մկրտչեան<sup>\*</sup>, Մեր ներկայ հրատարակութեամբ ոչ միայն վերջնականապէս պարզում է այդ խնդիրը, այլ և գաղափար ենք ստանում Անանիա Նարեկացու գրքի ընաւորութեան և գրելու եղանակի մասին իրական մնացորդից: Թէև այս հատուածը քաղուածք է Անանիայի Հակաճառութիւնից, բայց տեղ տեղ բառացի պիտի լինի, ինչպէս յատուկ է Երզնկացու աղբիւը Ներից օգտուելու եղանակին նաև իւր միւս աշխատութիւնների մէջ:

Գրիգոր Նարեկացին Կճաւայ ուխտին ուղղած թղթում ցոյց է տալիս Անանիայի «զարմանագիծ հակաճառութեան» մօտաւոր բովանդակութիւնը Թոնդրակեցիք հերքում էին Զեռնաղբութիւնը, Հաղորդութիւնը, Մկրտութիւնը (և Աւագանը), Կիւրակի օրուայ նշանակութիւնը, Ծնրագրութիւնը, Խաչի Երկրպագութիւնը, Քահանայութիւնը. Պսակը, Երախայրիք տալը եկեղեցուն, քարոզում էին «զմծզնէակոն անխափի պղծութիւնն» և «զզլիսաւոր աղանդին իւրիանց գարզութեան յանդնեալ Քրիստոս էին անուանում: Անանիան ըստ Գրիգոր Նարեկացու այս բոլոր խնդիրները քննութեան է ենթարկել և «իբր զիմաստուն նախամարտիկ տապալիաց զառասպելաբան հայնոյութիւն անաւրինելոցն Թոնդրակեանցն»: Եթէ այս տեղեկութեամբ դատելու լինինք, պէտք է ասենք, թէ Երզնկացու համառօտ քաղուածքը կապ չունի վերոյիշեալ Հակաճառութեան հետ, որովհետեւ այսուել խօսք չկայ ուսանելի եկեղեցու սրբութեան մասին, որ մեր այս հրատարակութեան բովանդակութիւնն է կազմում: Բարեբաղդաբարը ոյն Գրիգոր Նարեկացու ուրիշ գրուածքներից երեսում է, որ եկեղեցւոյ սրբութեան գաղափարն էլ Թոնդրակեցիների հերքած կէտերից մէկն էր և Նարեկի Հե. բանի մէջ մի ամբողջ հատուած է նույիրուել հէնց այս գաղափարի պաշտպանութեան Թոնդրակեցիների գէմ: Գրիգոր Մագիստրոսի և Սրբատակէս Լաստիվերացու վկայութեանց համաձայն՝ նոքա մերժում էին ի միջի այլոց նաև նիւթական կամ տեսանելի եկեղեցինն<sup>\*\*</sup>: Իսկ Ներսէս Շնորհալու խօսքերից հաստատում է, թէ Անանիա Նարեկացին գրած պէտք է լինի իւր Հակաճառութեան մէջ նաև այս մասին, որ լոել էր Գրիգոր Նարեկացին Կճաւայ ուխտին ուղղած նամակի մէջ: Ահա Շնորհալու այդ հատուածը.

\* Ուսումնասիրութիւն եւն եր. 5—14: Die Paulikianer im byzantinischen Kaiserreiche. Leipzig. 1893. եր. 85—74:

\*\* Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. 1468: Պատմութիւն Արիստակեայ Վարդապետի Լաստիվերացւոյ. Թիֆլիս. 1912. եր. 462:

«Լուաք գարձեալ, զի ոմանք ի մոլար քահանայից զծածկեալ գարշահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Թոնդրակեցւոյ վերսախն շարժեն ի կործանումն լսողացն ասելով, եթէ եկեղեցի ոչ տինեալն է ի մարդկանի՝ այլ մեք միայն, և մաշտոցն գիրք և որ ի նմա կարգեալքն են խաչ օրհնել եկեղեցի և այլքն ոչ են ընդունելի։ Արդ ընդդէմ զայսոսիկ և զոյնպիսիս ասողացն յառաջագոյն հոգացին վարդապետք ժամանակին, և լուծին բաւականապէս զստութիւն նոցա. և որ ո՛ւ բնրեցեալ է զգիրս երանելոյն Անանիայի Նարեկացւոյ վարդապետի, որ բնդդէմ անիծելոյն Սմբատայ, անբերի ունի զայսոյիկ զպատասխանիսա»..»\*

Ընդգծուած մասերը այլ ևս կասկածի տեղիք չեն թողնում, որ Անանիա Նարեկացու ընդդէմ Թոնդրակեցւոյ Հակաճառութեան մէջ կար մի մաս, ուր պաշտպանուած էր արտաքին եկեղեցւոյ սրբութեան գաղափարը։ Ահա հէնց այդ մասի քաղուածքն է տալիս մեզ Երգնկացին։

Այս հատուածն առնուած է № 2187/2173. (2144 Կաը.) ձեռագիրց, 255ա—257ա։ Զեռագիրը Երգնկացու այլ և այլ աշխատութիւնների ժողովածու է. կաշէկազմ  $17 \times 12$  սմ., թուղթ. 16,8  $\times 12,4$  սմ., բոլորգիր  $13, \times 29,2$  սմ.: Վերնագիրները կարմրագեղով։ Տարարազզարար գրիչն ու ժամանակն անյայտ, բայց ոչ ուշ՝ ամենայն հաւանականութեամբ՝ ժ՞ի—ժԵ գարից։ Տողատուած են ձեռագրի համաձայն և պահուած բոլոր առանձնայատկութիւնները՝ բացի կէտազրութիւնից։

255ա՝ Նորին Յո՞հի վ՞ակի Եղնկայեցորան համառօտ քաղե՞լ Անանիայի վ՞րդին գրոցն որ ընդդէմ Թոնդրակեցոցն

Երկու են մեզ տեսակը եկեղեցո և երկորքեան սոքա հոմանունք և երկոքեան ի հարցմունս բանի մասանցն միապէս ստորոգին, ի սերսն և ի տեսակս, ի ձևն և ի թիւս, ի հոլովն և յենթանկեալ անւանցն տեսակս, այլ և ի զարմազանութի՞ս բարդիցն յ՞րց լիոց տարրանան. այս գունի սարասիւ եկեղեցի, փոխանակ եշիդ՝ զինն եփե՞լ. վ՞ա զի և ձայնորդքն փոխանակեն\* զմիմեանս, որ՞պէ և եղանցն լծակցութի, նոյն՞պ և տառք ձայնաւորք. եւ զի երիւք տեսակօք զո՞անա գրութի անուան, յիրէն, յարուեստէն և ի ձայնէն և ը (որպէս) ա (ամենայն) անուն, նոյն և եկեղեցոյդ անունն

Յառաջնո մասնէ իրին յատկացե՞լ ճանաչի, եկաւ.

\* Զ. մ. մէջ «փոխարկեն», ապա «նա» վերեւը զրած եւ «ը» չնշած։

որական գումարութեալ եկեղեցի ի մի հաւաքումն, և անունադրեալ ըստ ժողովման՝ եկեղեցի. իսկ առ սառչ և գարանելն, այսպէս իմասցի. եկեալ, լցեալ և ակառ ձեալ, որում և անունն ըստ իրին պատահեցաւ. այսինքն ի գոլոյն լցեղեալ և բոլորեալ և կոչեղեալ բոլոր եկեղեցի. Եւ զի ըստ բոլոր ժողովոյն և անունդ սահմանի, թէ յանշարժ տարեց լինեցի գունդն և կամ գումարն, և թէ ի շնչաւորաց կամ ի բանաւորաց կենդանեց յի մանալեաց և ի զգալեաց, որ են հրեշտակը և մզգիկը, անունդ միապէս ունի զսահման հասարակին և անհատին ըստ իմաստափրական ներագիծն վարժից. Արդ անունդ եկեղեցո ժողովումն թարգմանի, որպէս ասացաւ ըստ բառին ձայնի. Իսկ անուն սեփէ |

255բ ական մօրս մերո սիոնի հասարակարար ձայնեղեալ բոց տեսակաց. նոյն և յատկաբար ըստ ուղղափ առ վառ որ ի քառ հաւատոցն, որ կոչի կաթուղիկէ, այսինքն բոլորակ. որ բնաւ ընթհանուր ընդաւար տիեզերս միապէս, միատեսակ, մի կաթուղիկէ եկեղեցի կոչի. և քանզի է և ասի, թէպէտ և զգալի անւամբ յոքնաբար տեսանի, այլ անուեամբ եղական է և զօրութեալ միայնակ. որ վառ միո պէտքին, որ միապէս խորհրդածի յընդհանուր եկեղեցիս տիեզերաց. մի գոլով ի սմա և աւազանին գօրութի, ի մի մլու առութի լուսաւորութեալ ձրից ուր հոգոյն.

Ուսի գուճլ կաթուղիկէ անունդ և այլ տեսակ զօրութեալ, զոր և արուեստագէտք բժշկաց զնոյն անուն և ոմանունաբար առեղեալ կոչեն ի վերա միո երակի, և մայր և զլուխ առ բոլոր երակացն զնա զոլ սահմանեն. քանզի որ ի նմանէ \*\*, ասեն, արեանն կաթուածք, գրեթէ փոխանակ ընդաւար երակացն խաղացման բնութեան բաշխեալ տա զառողջութի բովանդակ մարմնոյն. զի որպէս նա նոյն անուամբ զլուխ և մայր առ առողջութեալ եալ և կոչեցի լի, և տուիչ կենդանութեալ բոլ անդակ անդամոց մարմնոյն. Այսպէս և այս կաթողիկէ անդանիկ և մայր և զլուխ հոգեոր անդամոց բանաւոր եկեղեցո լեալ և սահմանեալ ի բոլորիցն արարչէ. նախ զի ըստ անուանն ստուգաբանութեալ արտափայլեալ տեսանի հոգեոր շնորհաց գոլ աղբեր

\* «Բոլոր» լուսանցքում, բայց նոյն զրով

\*\* «Նէ» վանկը տողի զլսին, բայց նոյն զրչով.

և բխումն պարգևաբաշխութեա, Քանզի երիւք լծ  
որդե՞լ տաղիւք փորձե՞լ ցուցանի այսը տեսութիւն ||

256ա Լիւնիւ, Ղատիւ և Նոյիւ, որք հն քմակիցք միմեանց,  
այսպիսի բառիւ բացատրե՞լ յայտնելով զբանին  
զօրութեա, կաթան և կաթիւ և կայլակ, որ բազմա  
մասնաբար տեսութեա ըստ բաշխման երակացն,  
որ ի մարմին բաղկացե՞լ, և ընդ միով նուանեալ գ  
երաբնիւն կաթողիկէիւ, յորմէ և առողջութեն ճ  
անդիպի ն՞ց բաշխումն, Եւս առաւել մանաւանդ

որք առ սա ժողովի՞լ՝ յայս կաթողիկէս, որ է զգալի  
և իմանալի ըստ մ՞ոյն պատկերի, և ընդ սմա միացե՞լ  
հոգիայարդար շաղկապութեա, ըստ իմանալի ածայ  
ին խորհըրդածութեն, յորում և շահմարանե՞լ կան  
ա գանձք հոգիսոր պարզեաց զիտութեա և իմաստու  
թե տն Այլ և ցուցական երկութիւ խաղան ի սմա  
երակ բաշխից ս՞ր հոգոյն շնորհաց, վ՞ո առ ի յերկնից կա  
թելոյն ի սա ածային անձառելիք ճառագայթիցն շող և նշոյլը  
իմանալի ծագման արեգականն\*\* արդ թե: Այսպիսի ահս  
ակաւ գերակայել կայ իւրական ի փառսն, ունելով  
յինքեան վկաթանն մշտընչենարուս հոգեսնունդ  
կաթինն յերկարոյս ստեացն կառուցմանց. այս  
է ի հին և ի նոր կտակարանաց, մանաւանդ թէ պա  
րզաբար իսկ է ասել ըստ Պ՞ղի և ըստ միւսո մ՞ոյէին  
աղբեր ի տանէ տն բիսել. Եւ նոավտակ յորձանք  
հոսանաց հոգոյն ի սմա աղբերացե՞լ, այսինքն առ  
աքելական և մ՞ոյէական և վ՞ոպական մասին շնորհացն  
տեսակը ըստ ի՞նքնական իւրում անուանն, որ յեր  
իցն նախասացե՞լ տառից. նա և ոչ միայն իրը ի դուռ  
է ինչ ցայտեալ կաթիւ այլ լցեալ և ծովացեալ ի |

256բ սմա բազում մասունք շնորհաց հոգոյն մաքրութիւն  
աւազանին և քառանկիւն սեղանոյն հաստատու  
թե, յորում իրը ի խաչին փայտի բազմե՞լ զառնն ա՞յ  
ի զենումն պ՞տգի, յորմէ իրը ընդ ցնցուղ ինչ հոգե  
որ երակաց կայլակը արեանն արձակե՞լ, տուիչ կենդ  
անութեա անդամոց մարմնո եկեղեցո, Այլ և տուն և  
տաճար և եկեղեցի ասի, ըստ իմանալոյն զօրութեա ան  
դւանն ձայն, որպէս տուն տ՞ն և տաճար տ՞րունական,  
և եկեղեցի քեա, քանզի ըստ պատույն է զոյացութեա ս՞ր

\* «Անձառելի» լուսանցքում, նոյն զրով:

\*\* «Արեգակ» նշանագրով.

եկեղեցու և ի ժողովմանէ բոլորման առընկալաւ զգ ոյացութէին, ստացել իւր գործ յատուկ զժողովելն և զգումարելն զցրուեալոն յազանց օտարաց, և վերստին ծնանի յարդանդէ ս' բ աւազանին և եկեղեցուցել յինքն հաւաքէ զսես բանաւոր կենդան ե՞ց, առնելով որդիս ա՞յ ընծա յեկեղեցիս անդրանկաց յերկինս. Յիրաւի ապա զանունն ըստ գործոյն առ ընկալաւ, որ՝ պ զի՞ մն փրկելոյն և սողումոն՝ զխազաղ ութէին և եկեղեցի ի ժողովելոյն. Եւ գձ՝ լ որ՝ պ բանաւ որն ի չորից տարեցս խառնել ունի զբաղկացութէին լինելութէի և կենդանական և բանական իմաստիւն պատուել, ժողովի և գումարի ի մի խմբեալ զաս, և ե կեղեցի անուանի, յորժամ լինի ք՞ս ի մէջ նց. Նոյն տարագեաւ զորբայս իմասցիս զտեսակ. ի հիւթական տարեցից խառնել և զոյացել ներգործական ձեռա մբ արարչին, և փոխանակ բանիւ և մտաց՝ ունի զազդ ական զօրութէի ամենակալին ա՞յ. Իոչի և կոչարան, քանզի կանկնեալ կա գմբեթածե խորանարդ յօրի ||

257ա նակ վերինն ե՞մի և իրը ձայնիւ յինքն կոչէ զբանական կենդանիս սեսի մ՞զկան և հանգիտանուման դշ խոի զարդարել թագիւ խաչին նշանաւ.

Սա և հոմանուն ասի և յարանուն և փաղանուն ըստ իմաստասիրական ներհիւսիցն շարագծութէն. հոմանուն, զի զնոյն ունի զնոլովումն անուան և ձայնի, որգան, վերնոյն ե՞մի և զանդրանկացն յերկինս. և յարանուն՝ վ՞ս զի դբականաբար եղաւ և յարելութէր միացաւ ի մինն և ի պարզականն. և յարել ու նի յինքն զնորայն նազելի խ՞նդ. Եւ փաղանուն՝ քանզի ի բազմաց նշանակի ի յանուանց:

\* \*

\*

Առուղ եւ ՚նադատ Յովնաբանեաների մասին. Մեր շնորհալի բանաստեղծ-բանասէր Ա. Զորանեանը մի ամբողջ հատոր նուիրել է աշուղ և նկարիչ Յովնաթաներին, որոնք այդ տաներկու նշանաւոր ներկայացուցիչներն են\*. Առաջինը ծնած է մօտաւրապէս 1661 թուին և վախճանած 1772 թուին. Երկրորդ Յովնաթանի ծնունդն ու մահն անյայտ, բայց գործել է Վրաց արքունիքում և 1786 թուին՝ Ղուկաս կաթուղիկոսի հրաւե-

\* ՚նադաշ Յովնաթան եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչ. Փարիզ. 1910.

բով նկարազարդել Ս. Էջմիածնի տաճարը\*: Աշուղ Յովսաթանի որդիքն էին Յակոբ և Յարութիւն: Ամենահին յիշատակութիւնը սոցա մասին ունինք այն ողբի մէջ, որ Յակոբը զրել է իւր հօր՝ Յովսաթան Ա.-ի մահուան առթիւ «ի ՌՃՀԱ. թվով»=1722 թուին\*\*: Յարութիւնը հօր մահուան ժամանակ պատասխի էր. 1731 թուին արդէն «վարպետ» ըստ Ս. Էջմիածնի մատենադարանի № 2175/2162, 452թ ձեռագրի յիշատակարանի:

«Ենորհիւն և ողորմու՞րն այ աւարտեցաւ փոքր ժողովածու քարոզգիւրս ի թուականի Հայոց ՌՃԶ դէկտէմբերի ամսոյ է, ի վայելումն տէր Աւետիս յարեղային. առզ ծաղկեցաւ զիրս զեղցիկ իւ ոսկեզօծ ծաղկամբ ձեռ՝ մբ վարպետ Յարութիւն, որ է երկրեն Դուրնեաց իւ ի զեղցէն Շոօրայ, որդի առն Յովնար՝ նայ, և ես սակաւ աշխատող սմին վեցեկի տոռամբ կապեալ կորացեալ մեղօք Մեսրոպ, հանդերձ վերոյ գրեցեալ անուամբըն յիշել ազանմ, և դուք յիշեալ վիշիք ի քէ այ մերոյ ամէն»:

Տարաբաղդաբար մեր ձեռագիրը իսկական մանրանկարներ չունի, այլ միայն փառագրեր եւ լուսանցի զարդեր. որպէս Գրիգոր Տաթևացու քարոզների ժողովածու, բովանդակութիւնը նիւթ չէր տալիս մանրանկարչութեան համար: Զարդագրուած է իւրաքանչիւր քարոզի սկզբնաւորութեան առաջին գիրը, լուսանցքում որ և է զարդով: Փառագրերը թունադրեր են մեծ մասով, երբեմն և կենդանագրեր, խառն բռւսական զարդերի հետ: Լուսանցքի զարդերը սովորական մոտիւներ են, կամ թունաներ այլ և այլ գիրքով կամ կտուցներին ծաղիկ. միայն 85թ և 355ա ծաղկեթվեր են՝ պարսկականը յիշեցնող ոճով: Յարութիւն մանրանկարչի արուեստը շատ բարձր չէ և ոչ որ և է ինքնուրոյնութիւն ունի, բայց իւր ժամանակի համար վատ կարելի չէ համարել, իբրև վերաբարդութիւն նախկին օրինակների:

Զեռագիրը գրուած է թղթի վերայ, 16×10 սմ., բոլորգրով, Մեսրոպ գրչի ձեռքով, Աւետիս արեղայի համար 1731 թուին, «իսկ աթոռն էջմիածին»: Յիշատակարաններ կան բայց վերոյգրեալից 4ա—5թ, 290ա. 372թ., բայց ոչ Յովսաթանձանների մասին:

Շոռոթ գիւղի եկեղեցու մի արձանագրութիւն ցոյց է տալիս, որ Յակոբ և Յարութիւն եղբայրները 1750 թուին ծաղկել են իրենց հայրենի գիւղի եկեղեցու սեղանը: Յակոբն, ուրեմն, ոչ միայն բանաստեղծ էր, այլ և նկարիչ և Յարութիւնը ոչ միայն մանրանկարիչ էր, այլ և եկեղեցիների ծաղկող:

\* Մեր հրատարակած «Պատմութիւն ինչ . . . տեառն Ղուկասու սրբազն կաթուղիկոսին . . .» եւն զիւանական գրուածքը. Արարատ. 4904. 185.

\*\* Ա. Զորանեան. Նաղաշ Յովսաթան, եր. 115.

«ՈՇՃԹ թվին սուրբ սեղանն ծաղկեցաւ ձեռամբ Յովսաթանի (առաջին Յովսաթան կամ աշուղը) որդւոցն Յակոբին և Յարութիւնին, ուրին յիշեսչիք ի բարին և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէց\*:

Այս երկու եղբայրներից որի՞ որդին է Էջմիածնի տաճարը Նկարագարդող Նաղաշ Յովսաթանը, գժուար է հաստատ ասել պ. Զորանեանը կարծում է Յակոբի որդին, բայց փաստ չունի այդ մասին:

Նաղաշ Յովսաթանի որդիքն էին Մկրտում և Յակոբ, երկուսն էլ նկարիչ: Մկրտումը նկարել է հայ թագաւորների մի ամրող շարք, որոնցից մնացորդներ կան Մ. Աթոռում, տեսել ենք և Գանձասարում: Պատկերների կողքին գրուած է համապատասխան թագաւորի համառօտ կենսագրականը և նկարչի անունը: «Նկարեալ ձեռամբ Մկրտում պատկերահան Յովսաթանեանց 1836»: Մ. Աթոռի թանգարանում պահուած են Հայկի, Արամի, Տիգրան Ա-ի, Վաղարշակ Ա-ի, Արտաշէս Ա-ի, Արգարի, Տրդատի, Աշոտ Ա-ի և Աւոն Բ-ի պատկերները:

Յակոբի գործերից մեր ձեռքն է հասել Ներսէս Ե. Աշտարակեցու փոքրագիր  $40 \times 31$  սմ., բաւական գեղեցիկ պատկերը, որ արուեստագէտը նկարել է Էջմիածնում: Այդ պատկերը Տ. Կարապետ եպիսկոպոսի ձեռքով նուիրուած է Մ. Աթոռին՝ Նաղաշ Յովսաթանի թոռը և Յակոբի գուստը տիկին Նունէի կողմից, ամուսին Թարթիզեցի յայտնի Ծատուր խան Սէթիսանեանի: Պատկերի յետեր հետեւալ մակագրութիւնը կայ, որ նոյնութեամբ արտադրում ենք այստեղ.

«այս պատկերն նկարել է յայտնի նկարիչ Յովսաթանի որդի Ակօր Յովսաթամեանն սուրբ էջմիածնի լճի ափին երջանկայ յիշատակ շինարար և պաշտպան հայրենիաց տեր տեր Ներսէս 5-երուա աշտարակեցի հայրապետին, նուվիրում է սուրբ աթոռի թանգարանին յովսաթանեանի տուստը Նունէ և նրա ամուսին Ծատուրիսան Սէթիսանեան, 1911 նոյեմբերի 15-ին ի Թաւրէզ:

Ցանկալի էր Յովսաթանեանների մասին եղած աւանդութիւններն ու տեղեկութիւնները ի մի ժողովել:

Գուրեզին վարդապետ

\* Մեսրովք արքեպիսկոպոս Սմբատեանց. Նկարադիր Երնջակալ • Տփխիս. 1906. եր. 6 •